

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/3

17 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Կարեն Հեքիմյանի 24.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 16.06.2014 թ-ի թիվ 577 որոշման դեմ:

Կարեն Հեքիմյանի գանգատում բերված փաստարկները.

2014 թ-ի սեպտեմբերի 24-ին, «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով ստացվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչության պետի թիվ 577 որոշումը, որը համարում է տարօրինակ և ոչ իրավաչափ հետևյալ պատճառաբանությամբ:

1. Որոշման տեքստից երևում է, որ այն կայացվել է 16.06.2014 թ-ին, սակայն դրա մասին Կարեն Հեքիմյանը (այսուհետ նաև գանգատաբեր) իրազեկվել է 24.09.2014 թ-ին, այսինքն՝ մոտ 3 ամիս անց: ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչության նման գործելաոճը համարվում է տարօրինակ և ոչ սկզբնական:

2. Որոշման հիմքում ընկած պարտավորությունն առաջացել է թիվ 2123413 ստուգման ակտից: Գանգատաբերի համար անհասկանալի է, թե երբ է կազմվել (ժամ, օր, ամիս, տարի) թիվ 2123413 ստուգման ակտը, ինչպես նաև ովքեր, ինչու և որտեղ է կազմվել թիվ 2123413 ստուգման ակտը:

3. Որոշման մեջ նշված է, որ ՀՏ պետը քննարկել է Ա/Ձ Կարեն Հեքիմյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը: Արդյունքում պարզ է դառնում, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ իրականացվել է վարչական վարույթ, որտեղ քննարկվել է խնդրո առարկան: Այս առումով ով է նախաձեռնել վարչական վարույթը, երբ է այն կայացել, ով է մասնակցել այդ վարչական վարույթին, ինչպես են պահպանվել (չխախտվել) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-51-րդ հոդվածները:

4. Որոշմանը կից ներկայացվել է «հաշվարկների տեղեկանք», որում որպես «տնտեսվարող սուբյեկտ, իրավական տեսակ» նշված է Ա/Ձ Կարինե Հեքիմյան: Այս առումով գանգատաբերը Ա/Ձ Կարինե Հեքիմյանի հետ որևէ կապ չունի:

Եթե խոսքը այնուամենայնիվ Ա/Ձ Կարեն Հեքիմյանի մասին է, ապա հայտնվում է, որ Ա/Ձ Կարեն Հեքիմյանը դադարեցրել է գործունեությունը 2003-2004թթ., իսկ պետական գրանցման թիվ 01Ա088895 վկայականը ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Արաբկիր 1 հարկային տեսչությանն է հանձնվել 25.10.2007 թ-ին, ինչի մասին կա համապատասխան տեղեկանք (ստացական): Ստացվում է, որ Ա/Ձ Կարեն Հեքիմյանը գործունեությունը դադարեցրել է 10-11 տարի առաջ, իսկ պետական գրանցման վկայականը հանձնել է 7 տարի առաջ: Թե գործունեության դադարեցման մասին, թե պետական գրանցման վկայականը հանձնելու մասին դիմումներն ընդունելիս, վարչական մարմինը՝ ՀՀ հարկային տեսչությունը, որևէ խախտում հարկային օրենսդրության իմաստով չի հայտնաբերել և չի մատնանշել: Ավելին, անցած 10-11 տարիների ընթացքում, հարկային օրենսդրության խախտման իմաստով գանգատաբերը ոչ մի հարկային մարմնից որևէ գումար վճարելու մասին պահանջ չի ստացել:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի. «հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո»: Ստացվում է, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչությունը հարկային օրենսդրության խախտումներ է հայտնաբերել և այդ մասին տեղեկացրել է 24.09.2014 թ-ին, այն դեպքում, երբ ենթադրյալ խախտումը կատարվել է առնվազն 10-11 տարի առաջ, իսկ համաձայն վերոհիշյալ իրավական ակտի նկարագրած ժամանակահավաճի իմաստով, հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ:

Եթե ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչությունն այնուամենայնիվ իրականացրել է վարույթ, ապա այն իրականացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների կոպիտ խախտմամբ: Գանգատաբերը չի ծանուցվել և հետևաբար չէր կարող մասնակցել վարույթին: Այս իմաստով խախտվել է ՀՀ Սահմանադրությունը, մարդու իրավունքները եւ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-51 հոդվածները:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով, գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչության պետի 16.06.2014 թ-ի թիվ 577 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Կարեն Հեքիմյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 16.06.2014 թ-ին ընդունել է թիվ 577 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 10.06.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Կարեն Հեքիմյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 100.000 դրամ, որն առաջադրվել է թիվ 2123413 ստուգման ակտով՝ ՀԴՄ-ի գծով տուգանք, և ենթակա է գանձման:

Գանգատում բերված պնդման վերաբերյալ, որ Որոշումը կայացվել է 16.06.2014 թ-ին, սակայն դրա մասին Կարեն Հեքիմյանը իրազեկվել է 24.09.2014 թ-ին, նշվեց հետևյալը:

Որոշումը 18.06.2014 թ-ին ուղարկվել է Ա/Ձ Կարեն Հեքիմյանին, վերջինիս վերաբերյալ Արաբկիրի ՀՏ-ում առկա հասցեով, սակայն 02.07.2014 թ-ին Որոշումը փոստային ծառայության կողմից ետ է վերադարձվել՝ չի պահանջվել նշագրմամբ: Այնուհետև Արաբկիրի ՀՏ կողմից հարցում է կատարվել ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն՝ Ա/Ձ Կարեն Հեքիմյանի բնակության հասցեի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Որոշումը կրկին անգամ Ա/Ձ Կարեն Հեքիմյանին է ուղարկվել ՀՀ անձնագրային և վիզաների վարչության կողմից տրամադրված հասցեով, որը նրա կողմից ստացվել է 24.09.2014 թ-ին:

Որոշումը կայացվելու համար հիմք հանդիսացած ստուգման ակտի վերաբերյալ նշվեց հետևյալը:

Համաձայն ՀՀ ԿԱ ՀՊԾ Արաբկիրի ՀՏ պետի 15.07.2005 թ-ի թիվ 2123413 հանձնարարագրի Ա/Ձ Կարեն Հեքիմյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման և դրանց շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգում: Ստուգման հանձնարարագրին Ա/Ձ Կարեն Հեքիմյանը ծանոթացել է 18.07.2005 թ-ին, որի վերաբերյալ հանձնարարագրի դարձերեսին առկա է համապատասխան գրառում: Ստուգման արդյունքում 18.07.2005 թ-ին կազմվել է թիվ 2123413 ստուգման ակտը, որը նույն օրը ներկայացվել է Ա/Ձ Կարեն Հեքիմյանին՝ ակտի «Ստացա ակտի մեկ օրինակը» տողում առկա է Ա/Ձ Կարեն Հեքիմյանի ստորագրությունը:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Կարեն Հեքիմյանի կողմից գանգատում բերված պնդումները՝ Արաբկիրի ՀՏ 18.07.2005 թ-ին թիվ 2123413 ստուգման ակտի մասին տեղյակ չլինելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Ինչ վերաբերվում է Որոշմանը կից ներկայացված տեղեկանքում Ա/Ձ Կարեն Հեքիմյանի փոխարեն Ա/Ձ Կարինե Հեքիմյան նված լինելուն, ապա այն ընդամենը մեխանիկական վրիպակի արդյունք է: Որոշման մեջ Ա/Ձ Կարեն Հեքիմյանի վերաբերյալ տվյալները նշված են ճիշտ:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ տվյալ դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի դրույթները, որի հետևանքով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջադրվել, նշվեց հետևյալը:

Քննարկվող դեպքում հիշատակված հոդվածի դրույթները կիրառելի չեն, քանի որ Արաբկիրի ՀՏ 18.07.2005 թ-ին թիվ 2123413 ստուգման ակտով արձանագրված խախտումը հարկային մարմնին հայտնի է դարձել ակտը կազմելու օրվանից: Այսինքն, ակտով արձանագրված խախտումը Որոշումը կայացվելու ընթացքում հայտնաբերված լինելու վերաբերյալ գանգատաբերի պնդումները տվյալ դեպքում հիմնավոր չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դրույթներով Արաբկիրի ՀՏ պետը, ուսումնասիրելով Ա/Ձ Կարեն Հեքիմյանի վերաբերյալ հարկային մարնում առկա նյութերն ու ապացույցները, 16.06.2014 թ-ին ընդունել է թիվ 577 որոշումը, որը Հանձնաժողովի համոզմամբ իրավաչափ է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 16.06.2014 թ-ի թիվ 577 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ԱՒԻՐՈՒՄՅԱՆ